Նախագիծ 58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

<<ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության 2009 թվականի ՀՕ 160-Ն օրենքի (այսուհետ՝Օրենք) հոդված 38 հոդվածի 3-րդ մասում 2-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Բացառություն են կազմում պատվավոր կոչումներ ստացած մանկավարժական աշխատողների կամ անորոշ ժամկետով պայմանագրի հիման վրա պաշտոնավարող և մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ 61 և ավելի տարին լրացած տնօրենների հավաստագրումը, որն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ընթացակարգով՝ թեստավորման միջոցով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. Աշոտյան

Տեղեկանք

Կառավարության որոշման ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Տեղեկանք

ՀՀ կառավարության որոշումը ընդունելու դեպքում պետական բյուջեում ծախսերի էական ավելացում չի նախատեսվում:

Տեղեկանք հիմնավորում

Անհրաժեշտությունը-հաշվի առնելով վաստակաշատ մանկավարժների ունեցած ավանդը կրթական համակարգի զարգացման գործում և հանրակրթակն ուսումնական հաստատության կառավարման իրավունքի / հավաստագրի/ գործունեության 5 ամյա ժամկետի հետ հետագա պաշտոնավարման տևողության անհամապատասխանությունը: Նպատակահարմար է ընդառաջացել այդ կատեգորիայի տնօրենի պաշտոնի հավակնորդներին և սահմանելով նրանց համար հավաստագրման այլ ընթացակարգ

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները- գործող օրենքի համաձայն վերապատրաստված բոլոր քաղաքացիները, անակախ իրենց տարիքից և ունեցած վաստակից կրթության ոլորտում, միասնական չափանիշներին համապատասխան մասնակցում են վերապատրաստմանը և միասնական չափանիշներին համապատասխան հավաստագրման քննություններին /գրավոր և հարցազրույց/:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը- ստեղծել բարենպաստ պայմաններ վաստակաշատ տնօրենների և անորոշ ժամկետի պայմանագրերի լուծման պահին 61 տարին լրացած տնօրենների համար:

Կարգավորման նպատակը և բնույթը-սահամանել արտոնություններ օգոստոսի 1-ի դրությամբ 61 տարին լրացած և անորոշ ժամկետով պաշտոնավարող տնօրենների համար:

Ակնկալվող արդյունքները հեշտացված հավաստագրում: